

Մարդկային գործերի մեջ հայրենիքի պաշտպանությունն է ամենասրբազանը:

Գարեգին Լժնեհ

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

2024 թ. փետրվարի 13-ին Նրանք նահատակվեցին Ներքին Հանդում Սյունիքի սահմանները պաշտպանելիս. հարգանք հայրենյաց պաշտպան զորքերի հիշատակին



Էդուարդ Համլետի Հարությունյան



Արսեն Գագիկի Համբարձումյան



Գագիկ Վարազդատի Մանուկյան



Հրաչյա Թալիշի Հովհաննիսյան



Հայաստանի վրա Ադրբեջանի հարձակումը շատ հավանական է, իսկ ի՞նչ ենք անում մենք

Հայաստանի վրա Ադրբեջանի հարձակումը շատ հավանական է: Այդ մասին France 24 հեռուստատալիքի հետ զրույցում հայտարարել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ շեշտելով, որ այդ մասին է փաստում Բաքվից հնչող հայտարարությունների վերլուծությունը:

Փաշինյանի խոսքով՝ Բաքվի կողմից Հայաստանի Հանրապետությունն «Արևմտյան Ադրբեջան» անվանելու, ինչպես նաև Ներքին Հանդում վերջին հարձակման ֆոնին պարզ է դառնում, որ Ադրբեջանի հետ խաղաղությունն այս պահին հնարավոր չէ:

«Եթե հաշվի առնենք Ադրբեջանի հայտարարությունները, ապա կարող ենք եզրակացնել, որ Հայաստանի վրա նոր հարձակումը շատ հավանական է: Բացի այդ՝ Ադրբեջանի վերջին հարձակումը մենք պահանջեցինք հետաքննություն, սակայն, չնայած դրան, Ադրբեջանն օգտագործում է իրավիճակն իր հոստորաբանությունը սնելու համար: Այս ամենը ստիպում է մտածել, որ Ադրբեջանը նոր հարձակում է նախապատրաստում Հայաստանի դեմ», – հավելել է նա:

23 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 Թ.

«Վերջերս Սյունիքում տեղի ունեցած միջադեպերը վկայում են, որ եսկալացիայի վտանգը իրական է մնում: Ֆրանսիան ցավում է, որ փետրվարի 12-ին կրակոցից ադրբեջանցի զինվոր է վիրավորվել, ինչն ընդունել է հայկական ղեկավարությունը: Բայց Ֆրանսիան ակտիվորեն է հայտնում Ադրբեջանի անհամաձայն պատասխան հարվածի համար, որի արդյունքում հայկական կողմն ունեցավ 4 զոհ և մեկ վիրավոր», – հայտարարել է Ֆրանսիայի նախագահը: Մակրոնի կարծիքով՝ Սյունիքում տեղի ունեցած միջադեպերը վկայում են, որ եսկալացիայի վտանգն իրական է մնում: 21 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 Թ.

Գերագույն հոգևոր խորհուրդը խիստ տարակուսելի է համարում Նոր Սահմանադրությունն ընդունելու նախաձեռնությունը

Փետրվարի 20-24-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն.Ս.Ս.Ս. Գարեգին Երկրորդ Մայրազույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ատենապետությամբ Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշայանի տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի ընդլայնված կազմով ժողովը:

Գերագույն հոգևոր խորհուրդը դատապարտելի նկատեց հրադարարի պայմաններում Ադրբեջանի անթաքույց ծավալապաշտական նկրտումները, Հայաստանի ինքնիշխան տարածքների նկատմամբ շարունակվող ադրբեջանական զինված ուժերի ոտնձգությունները և թշնամանքի ու հայատույժության բարոզությունը: Հայրենիքի անջնջ ծառայած անվտանգային հիմնախնդիրների հաղթահարման, Արցախի ժողովրդի իրավունքների պաշտպանության հարցում Գերագույն հոգևոր խորհուրդը կենսական և կարևոր համարեց համազգային միաբանությունը, ազգային կառույցների ներուժի արդյունավետ կենտրոնացումը, Հայաստան և սփյուռք հա-

րաբերությունների առողջացումն ու գործակցության պատշաճ կազմակերպումը:

Ժողովականները նաև աղոթք բարձրացրեցին օրեր առաջ Սյունիքի Ներքին Հանդ գյուղի հայկական դիրքերի ուղղությամբ ադրբեջանական ագրեսիայի պատճառով զոհված զինծառայողների հոգիների խաղաղության և վիրավորների շուտափույթ ապաքինման համար:

Անդրադարձ կատարվեց Ադրբեջանի կողմից որդեգրված Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության թիրախավորման ու յուրացման բաղաբաղականությանը, պատմամշակութային արժեքների, պատմական սրբատեղիների ու շիրիմների պղծման ու ոչնչացման դեպքերին: Գերագույն հոգևոր խորհուրդը կարևորեց Մայր Աթոռի Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության հարցերով գրասենյակի հետևողական ջանքերը միջազգային հանրությանն իրազեկելու Արցախի հուշարձաններին սպառնացող վտանգների մասին:

Տեղեկացվեց նաև, որ իրականացվող սոցիալական ծրագրերի շրջանակներում անցնող ամիսներին Եկեղեցին կեցույթային պայմաններով ապահովել և կրթական աջակցություն է

Եկեղեցի-պետություն ոչ բնականոն հարաբերությունների պատճառով լուծման կարոտ են մնացել ազգային-հոգևոր նշանակության մի շարք առանցքային հիմնախնդիրներ



տրամադրել բռնի տեղահանված բազում արցախահայերի, մասնավորապես ուշադրության կենտրոնում են եղել զոհվածների և չորս ու ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքները: Ընդգծվեց սոցիալական ծրագրերի շարունակականությունը ապահովելու համար նոր միջոցների ներգրավման անհրաժեշտությունը

Հարունակությունը՝ էջ 2



Գերագույն հոգևոր խորհուրդը խիստ տարակուսելի է համարում Նոր Սահմանադրությունը ընդունելու նախաձեռնությունը

Սկզբը՝ էջ 1

Ժշտությունը:

Արձանագրվեց, որ Եկեղեցի-պետություն ոչ բնական հարաբերությունների պատճառով լուծման կարող են մնացել ազգային-հոգևոր նշանակության մի շարք առանցքային հիմնահարցեր՝ առնչված օրենսդրական, կրթական, մշակութային, սրբավայրերի պահպանության կարևորագույն ոլորտներին:

Ժողովականները մտահոգություն արտահայտեցին, որ հանրակրթության ոլորտում իշխանությունների որդեգրած բաղադրականության հետևանքով հարվածի տակ են հայտնվել հայագիտական առարկաները, մասնավորաբար կուրսագույն սխալներով, բացթողումներով և կամայական մոտեցումներով աղճատվել և ձևախեղվել է Հայոց պատմության բովանդակությունը: Վերահաստատելով իր դիրքորոշումը ԳՀԻ եզրահանգեց, որ օրինական բոլոր ճանապարհներով պետք է հանրակրթությունը գերծ պահել ինչպես հակազիտական, այնպես էլ հակազգային հոսանքների և գաղափարների ազդեցությունից:

Մասնավոր անդրադարձ կատարվեց Նոր Սահմանադրությունը ընդունելու վերաբերյալ ՀՀ իշխանությունների մտադրությանը: Ընդգծելով, որ ՀՀ Սահմանադրության հիմքն են կազմում ազգային-հոգևոր կյանքի խորհրդանշանները, մեր ժողովրդի նվիրական անցյալի հիշատակներն ու իրադարձությունները և ազգային մեր իղծերն ու ձգտումները՝ ժողովականներն անթույլատրելի համարեցին այդ

արժեքների որևէ նսեմացում կամ անտեսում հանրային բնակարաններում, առավել ևս Նոր Սահմանադրության ընդունման համատեքստում:

Գերագույն հոգևոր խորհուրդը խիստ տարակուսելի համարեց Նոր Սահմանադրությունը ընդունելու նախաձեռնությունը հատկապես, երբ հանրային սովոր շրջանակներում այն ընկալվում է նաև որպես հետևանք արտաքին հարկադրանքի: Արձանագրվեց, որ Նոր Սահմանադրության ընդունման վերաբերյալ Հայաստանի բարձրաստիճան տարբեր պաշտոնյաների, ինչպես նաև Ադրբեջանի նախագահի խոսույթը միայն խորացնում է առկա կասկածները:

Քննության առնելով «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքում առաջարկվող փոփոխությունները, ԳՀԻ խիստ կարևորությամբ ընդգծեց, որ օրենքում առաջարկվող հավելումները չպետք է հակասեն մեր ժողովրդի՝ ընտանիքի նվիրական պատկերացումներին ու բրիտանոնական ընկալումներին և չպետք է տեղիք տան մերժելի տարրերի ներդրումը:

Գերագույն հոգևոր խորհրդի ժողովն ավարտվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով և «Պահպանիչ» աղոթքով:

ԸՍՏ ՄԱՅՐ ԱՅՈՒՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
24 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 Թ.

Ադրբեջանն ու Թուրքիան պահանջում են փոխել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը

Ադրբեջանի նախագահը ս. թ. փետրվարի 1-ին ուղիղ հայտարարեց՝ խաղաղությունը հնարավոր է, եթե Հայաստանի Սահմանադրությունը փոխվի: Այլևս Հայաստանի Անկախության հռչակագրի ձևակերպումներն Ադրբեջանի նկատմամբ տարածքային նկրտումներ է համարել:

«Հայաստանի Սահմանադրության և այլ փաստաթղթերի փոփոխությունների դեպքում հնարավոր կլինի հասնել խաղաղության: Հայաստանի Անկախության հռչակագիրը պարունակում է Ադրբեջանի Դարաբաղի շրջանը Հայաստանին միացնելու, Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը խախտող ուղղակի կոչեր: Այդ փաստաթղթին հղումներն արտացոլված են Հայաստանի Սահմանադրության մեջ», - ասել է Ադրբեջանի նախագահը:

Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատգամավոր, թուրք-ադրբեջանական միջխորհրդարանական բարեկամության խմբի ղեկավար Շամիլ Այրիմը փետրվարի 24-ին հայտարարել է՝ «Հայաստանը պետք է

փոփոխություններ կատարի իր Սահմանադրության մեջ, որում արտացոլված են նրա տարածքային պահանջներն Ադրբեջանի և Թուրքիայի նկատմամբ», այնպես նաև պետության հետ խաղաղություն անհնար կլինի:

«Հայաստանը, որ փորձում է Նոր տեր գտնել և սրա-նրա գիրկն է նետվում, պետք է իմանա՝ իր միակ ճանապարհը Ադրբեջանի բոլոր պայմաններն ընդունելն ու Ադրբեջանի հանդեպ տարածքային պահանջներից հրաժարվելն է», - հայտարարել է Այլևս «Խոչընդոտ ցեղասպանության» հուշահամալիրի հիմնարկի արարողության ընթացքում փետրվարի 26-ին:

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Իրանը պատրաստ է ապահովել Հարավային Կովկասի ռազմավարական անվտանգությունը՝ հաշվի առնելով իր կարմիր գծերը

Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Էրրահիմ Ռախիսի ողջունել է Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության բանակցությունները՝ հայտնելով, որ Իրանի պատրաստակամությունը՝ ապահովելու կովկասյան տարածաշրջանի ռազմավարական անվտանգությունը՝ հաշվի առնելով այդ առումով Իրանի Իսլամական Հանրապետության կարմիր գծերը:

Ինչպես հայտնում է IRNA-ն՝ Ռախիսին այս մասին ասել է Հայաստանի փոխվարչապետ Միեր Գրիգորյանի հետ հանդիպմանը: Անդրադառնալով Հարավային Կովկասի իրավիճակին՝ Ռախիսին ասել է, որ Իրանը կարևորում է տարածաշրջանում կայունության և անվտանգության պահպանումը:

Ռախիսին նշել է, որ Իրանը

դեմ է տարածաշրջանում դրսի ներկայությանը՝ հավելելով, որ արտաքին ուժերի ներգրավվածությունը տարածաշրջանային խնդիրներին ոչ միայն լուծումներ չի տալիս, այլ նաև ավելի լուրջ մարտահրավերներ է բերում:

Իրանի նախագահը Թեհրանի և Երևանի հարաբերությունները բնութագրել է որպես պատմական, բարեկամական և կառուցողական:

Նա իր աջակցությունն է հայտնել Թեհրանի և Երևանի միջև բոլոր պայմանավորվածությունների լիարժեք իրականացմանը՝ ասելով, որ կոնկրետ պայմանավորվածությունների իրագործումը շնչառ է պահանջում, և երկու երկրների տնտեսական հարցերով համատեղ հանձնաժողովը պետք է դրանց հետամուտ լինի:

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 Թ.

Իրանի համար անընդունելի է տարածքային որևէ փոփոխություն. դեսպանը՝ «Չանգեզուրի միջանցքի» մասին

Իրանի Իսլամական Հանրապետության վերջնական դիրքորոշումն այն է, որ պետք է հարգել տարածաշրջանային երկրների տարածքային ամբողջականությունը:

Ինչպես տեղեկացնում է «Արմենպրես»-ը, այս մասին հայտարարեց ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մեհդի Սոբհանին՝ պատասխանելով հարցին, թե արդյոք փոխվել է Իրանի դիրքորոշումը «Չանգեզուրի միջանցքի» վերաբերյալ:

«Իրանի Իսլամական Հանրապետության վերջնական դիրքորոշումը այն է, որ ոչ մի կերպ չենք կարող ընդունել տարածքային փոփոխություն: Ցանկացած տարածքային փոփոխություն պետք է տեղի ունենա երկու երկրների փոխադարձ տարածքային ամբողջականության ճանաչման հիմքով, և դա լինելու է մեր վերջնական

դիրքորոշումը: Իրանի Իսլամական Հանրապետության վերջնական դիրքորոշումը այն է, որ պետք է հարգել տարածաշրջանի երկրների տարածքային ամբողջականությունը», - ընդգծեց դեսպանը:

Դիվանագետի խոսքով՝ Իրանի համար անընդունելի է տեսնել Հայաստանի շուրջ լարված իրավիճակ:

«Բոլոր կողմերին աջակցում ենք, որպեսզի հնարավորինս շուտ ջերմ ու խաղաղ հարաբերություններ հաստատվեն: Մենք վստահ ենք և կարծում ենք, որ միակ ճանապարհը խաղաղ հարաբերություններ ունենալն է և բարեկամական երկխոսությունն է: Եվ մենք բոլոր կողմերի հետ հարաբերություններ և երկխոսություն ունենք, որպեսզի կարողանանք խաղաղություն հաստատել տարածաշրջանում», - ասաց դեսպանը:

16 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 Թ.

Հայաստանն ու Իրանը տնտեսական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր են ստորագրել

Հայաստանի Հանրապետությունը և Իրանի Իսլամական Հանրապետությունը ստորագրել են 19 ոլորտում տնտեսական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր:

Ինչպես հայտնում է IRNA-ն՝ համաձայնագիրը ստորագրվել է հայ-իրանական միջկառավարական համատեղ հանձնաժողովի 18-րդ նիստի

փակմանը: Հանձնաժողովի նիստի փակման արարողությունը կայացել է փետրվարի 15-ի առավոտյան Թեհրանում՝ ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանի և Իրանի պլանավորման և բյուջետային կազմակերպության ղեկավար Դավուդ Մանգուրի մասնակցությամբ:

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 Թ.

Սյունիքը Հայ առաքելական եկեղեցու և Հայոց Նվիրապետի հետ է...

Նախ խոստովանենք և փաստենք՝ ամբողջական Սյունիքի անունից խոսելու իրավունք, ցավոք, որևէ մեկն այսօր չունի: Ուստի և ներկայացվող խոսքը մեր անունից է ու մեր բազմահազարանոց լսարանի անունից...

Այն, ինչ տեղի է ունենում Հայ առաքելական եկեղեցու և Ամենայն հայոց կաթողիկոսի շուրջ, լրջագույն տարակուսների տեղիք է տալիս: Պատերազմը մեր դուռն է ծեծում. դա խոստովանում, այդ մասին բարձրաձայնում են բոլորը՝ ՀՀ վարչապետից մինչև միջազգային կազմակերպությունների և աշխարհի ուժային կենտրոնների ներկայացուցիչներ: Եվ բախտորոշ ու ճակատագրական այս ժամին, հայոց պետության ու պետականության պաշտպանության գործին ազգովի լծվելու, համախմբվելու և մեկ բռունցք դառնալու փոխարեն, Հայ առաքելական եկեղեցու շուրջ խարդավանքներ ենք հյուսում՝ էլ ավելի մասնատելով մեր ազգը, կրկին ջուր լցնելով բարե դարի կանոններով առաջնորդվող թշնամու ջրաղացին:

Ստեղծված վիճակը Սյունիքում լրջագույն մտահոգությունների տեղիք է տվել...

Պատճառներից առաջինը, ինչպես նշեցինք, Նոր պատերազմի սպառնալիքն է:

Սյունյաց պատճառը Սյունիքի պատմական պատասխանատվությունն է Հայ առաքելական եկեղեցու հանդեպ: Այդ, Հայաստանում քրիստոնեության տարածման, քրիստոնեական արժեքների պաշտպանության գործում Սյունիքն առանձնահատուկ տեղ է ունեցել և ունի:

Այդ դիտարկումը հիմնավորել և ընթերցողին ենք ներկայացրել դեռևս 2018 թ. հուլիսի 28-ի մեր հրապարակման մեջ՝ «Սյունյաց թեմը, հիմնված Սուրբ Գրիգորի կողմից, չի կարող անտարբեր լինել այն ամենի հանդեպ, ինչ կատարվում է Հայոց Նվիրապետի շուրջ»:

Այսօր ստիպված ենք այդ հոդվածը կրկին դնել ընթերցողի սեղանին, քանզի չեն փոխվել ոչ ներկայացված փաստարկները, ոչ եզրակացությունները, ոչ էլ մեր դիրքորոշումը: Ավելին, դրանք ավելի հրատապ են դարձել՝ պայմանավորված այն վտանգավոր զարգացումներով, որ տեղի են ունենում Սյունիքի շուրջ:

Ստորև՝ հիշատակված հոդվածն ամբողջությամբ:

Նորություն ասած չենք լինի, եթե հիշեցնենք, որ քրիստոնեությունը Հայաստան է մուտք գործել առաջալների ժամանակներում՝ կապված Թադեոս և հատկապես Բարդուղիմեոս առաքյալների հետ, ովքեր սուրբ Ավետարանի ճշմարիտ ուսմունքի քարոզումը սկսեցին Սյունիքից:

Ահա Ստեփանոս պատմիչի վկայությունը. «...Հայերից նախ հավատացյալ դարձան սյունեցիները, որոնք սուրբ Ավետարանին հնազանդվեցին Բարդուղիմեոս սուրբ առաքյալի միջոցով... Բարդուղիմեոսը Պարսկաստանից վերադառնալիս իր աշակերտների հետ գալիս է Ատրպատականով և անցնելով Երասխ գետը՝ մտնում է Սիսականի սահմանները, սկսում է բարոզել Որդվատ գյուղում, Արևիք գավառում, Բաղբում և Գողթում: Սրանք, ընդունելով Ավետարանի քարոզությունը, լուսավորվեցին ավազանի մկրտությամբ...» (Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 76):

Այնուհետև՝ Սյունյաց մեծ իշխանը Թորգոմա տան ընտիր իշխանների, կուսակալների, կողմնակալների մեջ էր, որոնց հավաքեց աստվածապսակ Տրդատ թագավորը և ուղարկեց Կապուտկացոց կողմերը՝ Կեսարիա քաղաքը, որ հայերեն Մաժաթ են կոչել, որպեսզի տանեն Գրիգորին ու Հայոց երկրի բախանապետ ձեռնադրեն:

Վերադառնալիս Սյունյաց մեծ իշխանն առաջիններից էր, ով իր գնդով Եփրատում լուսավոր մկրտություն ստացավ:

Այնուհետև՝ մատենագրական վկայությամբ



Մովսես Խոտանասցի

յունները և Ազաթանգեղոսի տվյալները հաստատում են, որ Լուսավորչի կողմից է հիմնվել Սյունյաց եպիսկոպոսությունը, որի անդրանիկ առաջնորդը երանելի Գրիգորիսն էր՝ ձեռնադրված Սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից: Սյունյաց Անդոկ իշխանն էլ (հայոց ուրիշ իշխանների գլուխ անցած) Ներսես Մեծին ուղեկցեց Կեսարիա՝ Եվսեբի հայրապետի մոտ՝ ձեռնադրվելու Ամենայն հայոց կաթողիկոս: Ապա մեծ ժողովով Սյունիքի եպիսկոպոսությունը հռչակվեց Սյունյաց մետրոպոլիտություն, Սյունիքը՝ պատրիարքի նախաթոռ, որ հուճարեն լեզվով կոչվում է պրոտոֆրոնտես Մեծ Հայքի:

Եվ այդ կարգավիճակը շարունակվեց դարեր շարունակ:


Իսկ Սուրբ Սահակի և Մեսրոպի կողմից՝ Հայոց մեջ նախաթոռ վարդապետությունը, նաև գրքերի մեկնության ու թարգմանության իրավունքը միայն Սյունիքի մետրոպոլիտությանը շնորհվեց:

Հետագա դարերում էլ Սյունիքն անգերազանցելի դեր խաղաց ունիթորության, քաղկեդոնության դեմ պայքարում: Զլինել Սուրբ Հովհան Որոտնեցու և Սուրբ Գրիգոր Տաթևացու եռանդուն գործունեությունը, միգրացի և Հայ առաքելական եկեղեցին անդառնալի կրոնատեր ունենար պապության նվաճողական ձգտումների օրերում:

Նույն չափ բացառիկ էր Սյունյաց աթոռի դերակատարությունը դեպքումների մեջ հայտնված Հայոց եկեղեցական աթոռն Էջմիածնում վերահաստատելու գործում: Սյունյաց եպիսկոպոսությունն էր, տիեզերահռչակ Գրիգոր Տաթևացու գլխավորությամբ, որ պայքարում էր Կաղարչապատում վերականգնված տեսնելու կաթողիկոսի գահը, ինչն էլ իրականացվեց եռամեծար փոխտոմարի և աստվածաբանի աշակերտների կողմից՝ 1441-ին, որով և ավարտվեց Հայոց կաթողիկոսական աթոռի 1000-ամյա աստանդական ու դեպքումներով լեցուն շրջանը:

Ոչ պակաս հիշարժան է Սյունիքի դերը նաև 17-րդ դարակզբին, երբ Մայր աթոռը կանգնած էր լինել-չլինելու ստույգ սպառնալիքի առջև: Եվ միայն Մովսես Տաթևացի (Խոտանասցի) բարեփոխիչ կաթողիկոսի ջանքով չեզոքացվեց Հայ առաքելական եկեղեցու պառակտման վտանգը, աղբակոյտերից մաքրվեց և վերաշինվեց Մայր աթոռը, վերջ դրվեց աթոռակից կաթողիկոսների արատավոր ավանդույթին:

Զենք խոսում աստվածության գանձարան, Սիսական տան բոլոր վանքերի գլուխ և շնորհաբաշխության աղբյուր Տաթևի, ինչպես և Սյունյաց 49 վանքերի մասին, որոնք



Գրիգոր Տաթևացի



Հովհան Որոտնեցի

հարյուրավոր տարիներ շարունակ արթուն են պահել Քրիստոսի ուսմունքը ոչ միայն մեր լեռնաշխարհում, որոնցից (թեև մի մասն ավերված է) շարունակում է հորդալ հավատ և հույս մինչև այսօր:

Պատմական փաստարկների թվարկումը և Հայ առաքելական եկեղեցու պատմության մեջ Սյունիքի դերակատարության ցուցանումը կարող ենք շարունակել, բայց, կարծում ենք, ավաճող բավական է մեր մտահոգությունները հիմնավորելու համար:

Եվ, այդուհանդերձ, ինչո՞ւ մեր ասելիքի համար նախաբան կամ պատվանդան ընտրեցինք պատմական եղելություններից մի բանի դրված:

Դրանով, նախևառաջ, կամեցանք վերստին հիշել ու հիշեցնել պատմական իրողությունը՝ Սյունիքն անգերազանցելի դեր է խաղացել Հայաստան աշխարհում քրիստոնեության տարածման, քրիստոնեական արժեքների սերմանման, Հայ առաքելական եկեղեցու լինելիության ապահովման, մեր դավանանքի անաղարտության պահպանման աստվածահաճո գործերում:

Ավաճած վերահաստատեցիկն այսօրվա սերնդակիցներից շատերի անբնեյի, անսակարկելի հավատամքն ու վճռակալությունը, որ տեղ ենք մեր նախնիներից փոխանցված սրբազան ժառանգությունը, որ այդ ամենի հավատարիմ շարունակողն ենք:

Եվ այն, ինչ վերջին շրջանում տեղի է ունենում Հայոց Նվիրապետի շուրջ, դատապարտում ենք ամենայն խստությամբ ու անթույլատրելի համարում նմանատիպ գործողությունների հետագա կրկնումը:

Մենք ակնկալում ենք Հայոց պետությունից, երկրի բարձր իշխանությունից, որ խստագույն կդատապարտեն տեղի ունեցած արգահատելի գործողությունները և ոչ մի դեպքում թույլ չեն տա նմանատիպ գործողությունների շարունակումը:

Մենք, իհարկե, չենք հերքում իրողությունը, որ Հայ առաքելական եկեղեցու ներքին կյանքում, հոգևոր բովանդակության անընթաց հարցերում կան բազում մտահոգություններ, որոնք ողջամիտ և բաղաբակիր թևարկման պետք ունեն. «Սյունյաց երկրի» խմբագրակազմն էլ, հարկ եղած դեպքում, հա-

ճույթով կմասնակցի նման քննարկումներին և բանավեճերին:

Սյունյաց մեծերից մեկ ուրիշը՝ Նիկողայոս Ադոնցն էր ասում՝ «Հարեր շարունակ երկրի քաղաքական վիճակի փոփոխությունների հետ փոփոխվել է նաև հայ եկեղեցին՝ հարմարվելով Նոր պայմաններին» (Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 359):

Առանց վերապահումի համաձայն ենք մեծ հայագետի հետ՝ ենթադրելով, անշուշտ, որ խոսքը դավանաբանական հարցերի մասին չէ, այլ գործելակերպի:

Մեծն Ադոնցի դիտարկումից բխեցնում ենք՝ աշխարհում, նաև մեր երկրում տեղի ունեցող փոփոխությունների համահունչ փոփոխությունները պիտի կատարել Հայ առաքելական եկեղեցուն ևս:

Եթե կան հարցեր՝ Ամենայն Հայոց կաթողիկոսին առջվող, դրանք նույնպես պետք է հիմնավոր պատասխան ստանան: Բայց այն մեթոդը, այն գործելակերպը, պայքարի այն եղանակը, որ ընտրել են ոմանք, ինչին և ականատես եղանք, մեծագույն վիրավորանք է նախևառաջ մեր պետականությանն ու ինքնիշխանությանը, ապա և Հայ առաքելական եկեղեցուն, ինչպես և հավատավոր ամեն մի հայի:

Հայ առաքելական եկեղեցին բոլորին է, յուրաքանչյուրին է, նաև իմ ու ձեր նախնիներին է, իմ ու ձեր զավակներին ու թոռներին է, այսօրվա ու վաղվա Հայաստանին է, Արցախի աշխարհին է, նաև սփյուռքահայությանը:

Եվ հանրության որևէ խմբի բայերը, եթե անգամ փաստարկված լինեն, ինքնիրավչություն են, անթույլատրելի արարքներ: Ավելին, նման բայերով չենք կարող եկեղեցու առջև ծառայած որևէ խնդիր լուծել:

Մի խոսքով՝ պետք չէ բանը հասցնել այնպիսի վտանգավոր հանգրվան, որ Հայաստանի տարբեր վայրերից հավատավորներն ու Հայ առաքելական եկեղեցու Նվիրապետը հասնեն Սուրբ Էջմիածին և պաշտպան կանգնեն Հայոց Նվիրապետին:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հայ-ռուսական բազմադարյա բարեկամությունն ու համագործակցությունը՝ փորձության մեջ

Խաղաղապահները պետք է մնան ԼՂ-ում, նրանց ներկայությունը մշակույթի պահպանման երաշխիք է

Արդրեշանը պետք է մտածի այն մասին, որ հայ բնակչության Ղարաբաղ վերադառնալու պայմաններն ընդունելի չեն: Հիմքեր կան Լեռնային Ղարաբաղում ռուս խաղաղապահների առաքելությունը շարունակելու համար: Այդ մասին NSN-ին տված հարցազրույցում ասել է ՌԴ Պետդոմայի ԱԳՀ հարցերով կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Կոնստանտին Չատուկինը:

Չատուկինի խոսքով՝ ՌԴ խաղաղապահները չպետք է դուրս գան Արցախից, նրանց ներկայությունը Արցախի պատմամշակութային ժառանգության պահպանման որոշակի երաշխիք է տալիս:

«Լեռնային պայմաններն ընդունելի չեն հայ բնակչության վերադարձի համար: Բայց ինքնին վերադարձը և այն փաստը, որ հայր-յուրավոր տարիներ հայր են ապրել Լեռնա-



Կին Ղարաբաղում, չեն կարող անտեսել: Եթե Արդրեշանի ղեկավարությունը ողջ աշխարհի աչքում բաղաբանիր իրեն, երևալու բարի կամք ու ցանկություն ունի, պետք է այդ մասին մտա-

ծի: ՌԴ խաղաղապահները պետք են, բանի որ սա վերադարձողների համար որոշակի երաշխիք է և պատմամշակութային ժառանգության պահպանման որոշակի երաշխիք»,- նշել է պատգամավորը:

Չատուկինը հայտնում է նաև, որ արցախահայերը չեն ցանկանում վերադառնալ այնտեղ, բանի որ այնտեղ ապրելու համար անհրաժեշտ կլինի ստանալ արդրեշանական անձնագիր: Պատգամավորի խոսքով՝ արցախցիները մտահոգված են նաև, որ Արդրեշանի քաղաքացիություն ստանալուց հետո հետագայում ստիպված են լինելու պայթարել 33 ՉՈւ-ի դեմ:

«Լեռնային Ղարաբաղի հայերը մտահոգված են, որ Արդրեշանի քաղաքացիությունն իրենց վրա տարածելու փորձը կարող է հանգեցնել նրան, որ արական սեռի բնակչությունը զորակոչվի արդրեշանական բանակ: Յաշվի առնելով ներկայի հակամարտությունը, այդ թվում՝ սահմանային միջադեպերը, ԼՂ բնակիչները չեն ընդունի դա», - ավելի է խոսքը Չատուկինը:

21 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 Թ.

ՌԴ սահմանապահներն ակտիվ դեր են ունեցել Սյունիքում եսկալացիա թույլ չտալու գործում

Արդրեշանը Կոպիլիկին արձագանքել է Հայաստանի անվտանգության խորհրդի քարտուղարի՝ ՌԴ սահմանապահների հասցեին հիշեցրած բնադատությանը:

Ռուս սահմանապահներն անմիջական դերակատարություն են ունեցել Ներքին Հանդում Եսկալացիա թույլ չտալու գործում: Այդ մասին Sputnik Արմենիայի հետ զրույցում ասել է 33-ում ՌԴ դեսպան Սերգեյ Կոպիլիկինը՝ մեկնաբանելով Ներքին Հանդ գյուղի մոտ վերջերս տեղի ունեցած միջադեպը և դրա հետ կապված 33 Ան քարտուղար Արմեն Գրիգորյանի հայտարարությունները:

Արմեն Գրիգորյանը հայտարարել էր, որ Ռուսաստանը, ի տարբերություն ԵՄ դիտորդական առաքելության, մոտոք ունի Ներքին Հանդի սահմանային հատված, բայց այնուամենայնիվ Ռուսաստանը չի կարողացել կան-

խել միջադեպը:

ՌԴ դեսպանը կարծում է, որ Ռուսաստանի հասցեին բնադատական դիտորդությունները չափազանց միակողմանի են: Նրա մոտ հարց է առաջանում՝ ի՞նչ է նշանակում «չկարողացավ կանխել»:

«Իհարկե, պաշտոնապես հետաքննության արդյունքները, որոնց մասին ասել է հայկական կողմը, դեռ չի հրապարակվել, բայց ՉԼՄ-ներում արդեն գրվել է, որ միջադեպի սկիզբը հայկական կողմի կրակոցն է եղել: Ընդ որում՝ կրակոցը նույնիսկ զինծառայող չի եղել, այլ Երկրապահ կամավորական ջոկատի անդամ: Հավանաբար դա կամավորների շարքերում կարգապահության հարց է: Հայտնի է, որ ՌԴ սահմանապահներն անմիջական դեր են խաղացել եսկալացիա թույլ չտալու հարցում», - նշել է նա:

Դիվանագետն անազնիվ է համարում սահմանապահներին մեղադրել միջադեպը չկանխելու մեջ: Եվ երբ Կոպիլիկին այդ ամենը դիտարկում է ռուս խաղաղապահների, սահմանապահների նկատմամբ հնչող զանգվածային բնադատության համատեքստում,



երբ այդ ամենը դրվում է հայկական կողմի տարածաշրջանում կարգավորման հարցում Ռուսաստանի հետ աշխատելու անպարտապահ լինելու համատեքստում, ապա, իհարկե, նրա մեջ հարցեր են առաջանում:

22 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 Թ.

Հայաստանը գործնականում սառեցրել է իր մասնակցությունը ՀԱՊԿ-ում

France 24-ին տված հարցազրույցում այդ մասին հայտարարել է 33 վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Ես գնահատում եմ, որ ՀԱՊԿ-ն չի կատարել անվտանգային ոլորտի պարտավորությունները Հայաստանի նկատմամբ, մասնավորապես 2021 թվականին, 2022 թվականին, և դա չէր կարող անցնել առանց հետևանքների: Եվ հետևանքն էլ այն է, որ մենք գործնականում, ըստ էության, սառեցրել ենք մեր մասնակցությունը ՀԱՊԿ-ում», - հայտարարել է Փաշինյանը: Անդրադառնալով Հայաստանում ռուսական ռազմաբազայի վերաբերյալ հարցին՝ վարչապետն ասել է, որ ռուսական ռազմաբազան Հայաստանում է գտնվում ոչ ՀԱՊԿ-ի շրջանակներում:

«Ղա բոլորովին այլ իրավապայմանագրային հարթություն է, և այդ հարթությանն անդրադառնալու առիթ չենք ունեցել», - ասել է վարչապետը:

23 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 Թ.



ՀԱՊԿ կանոնադրությունը չի նախատեսում «սառեցված անդամակցություն» կարգավիճակ. Երևանի դիրքորոշումը պետք է հստակեցվի

Կրեմլը մտադիր է ամբողջությամբ հստակեցնել Երևանի դիրքորոշումը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը մասնակցելու հարցում, բանի որ այդ կազմակերպության կանոնադրությունը չի նախատեսում «սառեցված անդամակցություն» կարգավիճակ:

Այդ մասին, interfax.ru-ի փոխանցմամբ, ասել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը՝ պատասխանելով ՀԱՊԿ-ին անդամակցության սառեցման մասին 33 վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարության մասին հարցին:

«Որովհետև եթե ելնենք համապատասխան փաստաթղթերից, ապա նման ռեժիմ («սառեցված անդամակցություն» - խմբ.) դե յուրե պարզապես գոյություն չունի ՀԱՊԿ ծրագրում: Մենք կշիկենք, կիմասնակենք», - հավելել է Պեսկովը:

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 Թ.



ԼՂ հիմնախնդիրը լուծված չէ...

Արցախի Ազգային ժողովի ղեկավար կազմը հանդիպել է Արցախի հարցերով Հանձնախմբի համակարգողի հետ:

Այդ մասին տեղեկացնում են Արցախի ԱԺ-ից.

«Այսօր՝ փետրվարի 19-ին, Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի տեղակալ, նախագահի պարտականությունները կատարող Գագիկ Բաղդուսյանը և խմբակցությունների ղեկավարները հանդիպել են Արցախի ժողովրդի հավաքական հայրենադարձության և հիմնարար այլ իրավունքների պաշտպանության նպատակին կոչված Հանձնախմբի համակարգող Վարդան Օսկանյանի հետ:

Հանդիպման մասնակիցները շեշտել են, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը լուծված չէ, որ Արցախի հայաթափումը և ժամանակավոր բռնազավթումը չեն կարող վերացնել Արցախի ժողովրդի ինքնորոշման անբախտելի իրավունքը, սեփական հազարամյա բնօրրանում անվտանգ և ապահով ապրելու բնական պահանջը, որն ամրագրված է միջազգային իրավունքի նորմերով:

Քննարկվել են այն քայլերը, որոնք անհրաժեշտ են միջազգային հիմնավոր երաշխիքների ներքո ստեղծելու անվտանգ ու իրավական դրույթներով ամրագրված միջավայր՝ արցախահայության հայրենադարձման և անվտանգ ու ապահով կենսագործունեության իրականացման համար՝ բացառելով ֆիզիկական գոյության ու ինքնության սպառնալիքները: Կարևորվել է այդ ուղղությամբ համահայկական կառույցների և անհատների շանքերի նպատակաուղղված և թիրախային համադրումը:

Անթույլատրելի է համարվել արցախահայության հայրենադարձման հարցի շահարկման և չարաշահման որևէ դրսևորում:

19 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 Թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ 33 Սյունիքի մարզի «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կենսաբանության (10 դասաժամ), ԹԳԳԳ/ինֆորմատիկայի (8 դասաժամ), երաժշտության (8 դասաժամ), կերպարվեստի (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ 33 ԿԳՄՍ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» 33 օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ 33-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- 33 արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են փետրվարի 28-ից մինչև մարտի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա մարտի 19-ին՝ ժամը 12:00-ին (ԹԳԳԳ, կենսաբանություն առարկաներ) և ժամը 13:30-ին (երաժշտություն, կերպարվեստ առարկաներ)՝ 33 Սյունիքի մարզի Սյունիքի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Սյունիք, Վերին թաղ 19: Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 06 48 13, (0285) 6 04 44 հեռախոսահամարներով:

Արման Թաթոյանը փաստահավաք այցով Ներքին Յանդ գյուղում էր

Փաստահավաք այցով Սյունիքում ենք, այս պահին՝ Ներքին Յանդ գյուղում, գրել է Նախկին ՄԻՊ Արման Թաթոյանը:

«Տեղում հավաքված փաստերը լրացուցիչ ապացուցում են, որ 3 օր առաջ արդրեջանական զինված ծառայողները Չայաստանի տարածք, մասնավորապես՝ Ներքին Յանդ գյուղ ներխուժած վայրերից արձակված կրակոցներով են սպանել մեր զինվորականներին:

Ներքին Յանդում պարզեցինք, որ արդրեջանական զինված ծառայողները տարբեր ժամանակ իրենց դիրքերի [Չայաստանի ներխուժած հատվածներում] անմիջական հարևանությամբ իրականացնում են ականների պայթյուններ, լսվում են կրակոցներ: Արդրեջանական իշխանություններն իրականացնում են նաև զորավարություններ գյուղից այնպիսի հեռավորության վրա, որ գյուղի ներսում պարզ լսելի են կրակոցներ ու պայթյուններ թե՛ ցերեկ, թե՛ գիշեր ժամանակ:

Ներքին Յանդի բնակիչներին մտադրված փորձում են պահել վախի մեջ, մարդիկ չեն կարողանում հանգիստ տեղաշարժվել գյուղում, դպրոցի դիմաց են արդրեջանական դիրքերը, խաթարված է բնակիչների անվտանգ



կյանքը:

Միայն Ներքին Յանդ գյուղում արդրեջանական օկուպացիայի ներքո է հայտնվել 2,700 հեկտար տարածք, որից՝

- 2,400 հեկտար հատուկ պահպանվող հողեր.
 - 170 հեկտար անտառային հողեր.
 - 130 հեկտար համայնքային հողեր:
- Նշված 2,700 հեկտարից բացի, 1,000 հեկտարից ավելի հողատարածք հայտնվել է վտանգավոր գոտում, որտեղ կա՝ մ հնարավոր չէ իրականացնել գյուղատնտեսական կամ այլ

տեսակի որևէ աշխատանք, կա՝ մ այդ աշխատանքներն էականորեն դժվարացել են՝ կյանքի համար իրական վտանգների պատճառով:

Ու այս պայմաններում դրե-քնում ենք՝ արդյո՞ք մեր զինվորականները «խախտել են արդրեջանական զինվորների անդորրը»:

Չպետք է մոյլ տանք, որ մոռացության մատնվի ու միջազգային հանրային օրակարգերից դուրս գան երկրի ու ժողովրդի նկատմամբ արդրեջանական իշխանության շարունակվող հանցանքները»:

16 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 Թ.

Գարիկ Մուսաեյանի ողիսականը. և քանի-քանի մարդիկ են նման իրավիճակում հայտնվել Արցախի բռնազավթումից հետո

Խմբագրություն էր դիմել Կապանի բնակիչ Գարիկ Մուսաեյանը, ում հուզող խնդիրը, կարծում եմ, տասնյակ մարդկանց է առնչվում: 2008-2009 թվականներից մինչև 44-օրյա պատերազմն ընտանիքով բնակվել է Քաշաթաղի շրջանի Կովսական համայնքի Դիցմայրի-2 գյուղում, որն ինքն է հիմնել, այնտեղ վերաբնակեցրել չորս ընտանիք:



Մոր՝ Արեգնազան Բարսեղյանի հետ տարբեր բանկերից ու վարկային կազմակերպություններից վարկեր են վերցրել և տնտեսությունն հիմնել, զբաղվել հիմնականում հողագործությամբ, ստացված եկամտով վարձատրել իրենց միացած մարդկանց, պարտաճանաչ մարել վարկերը, հոգացել սեփական ապրուստը:

Բայց ամեն ինչ գլխիվայր շրջվեց 44-օրյա պատերազմից և դրան հաջորդած իրադարձություններից հետո: Նշված տարածքը հայտնվեց Արդրեջանի վերահսկողության ներքո, իսկ իր և մոր վարկերի համար երաշխավորներն ու համավարկառուները փաստի առաջ են կանգնել, հայտնվել սև ցուցակում: Գարիկ Մուսաեյանն էլ հայտնվել է բյուրոկրատական քաշքշուկների և դատական գործընթացների մեջ, ինչը հուշեց գրույց ունենալ նրա փաստաթան Գրայր Խաչատրյանի հետ:

Պարոն Խաչատրյան, նախ, մինչև հիմնախնդիրը լուսաբանելը, կուզեի՞նք, որ հակիրճ ներկայանաք, քանի որ առաջին անգամ եք մեր հարթակում:

– Շնորհակալ եմ, որ մեր հարցին ակնաչափ եղաք... Որպես փաստաբան, փաստաբանական գործունեությունն եմ իրականացնում Սյունիքի մարզում: 2010 թվականից իրավաբանության ոլորտում եմ, 2017 թ. սկսած արդեն մասնագիտացված փաստաբանական գործունեություն եմ իրականացնում,

փաստաբանական դպրոցն ավարտելուց հետո ստացել եմ արտոնագիր, գործունեության իրականացման նպատակով դարձել անհատ ձեռնարկատեր: Միևնույն ժամանակ համագործակցում եմ տարբեր հասարակական կազմակերպությունների, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ:

– Ինչպե՞ս եղավ, որ սկսեցիք զբաղվել խնդրի առարկայով:

– Գործունեության շրջանակում անցյալ տարի ինձ դիմել են Գարիկ Մուսաեյանը և Արեգնազան Բարսեղյանը՝ մայր և որդի, նշելով, որ հայտնվել են շատ դժվարին կացության մեջ: Գարիկին ճանաչել եմ դեռևս դպրոցական տարիներից, մանկուց նկատել եմ, որ արպտող, չարչարվող տեսակ է և ամեն ինչը կյանքում տեսնում է չարչարվելով ստեղծելու մեջ: Եվ ինձ համար զարմանալի չէր, որ Գարիկ Մուսաեյանը ժամանակին որոշել էր տեղափոխվել ազատագրված տարածքներ՝ գյուղ հիմնելու և այդտեղ իր տնտեսությունն ունենալու հաստատ մտադրությամբ: Նրան նաև Դիցմայրի-2 բնակավայրում էի հանդիպել. իմ աչքով տեսել հիմնած տնտեսությունը, ստեղծած ենթակառուցվածքները:

Ինձ դիմելիս հայտնեցին, որ այդ ամենը կորցրել են, որովհետև 2020 թվականին արդրեջանական լայնածավալ ագրեսիայի հետևանքով ստիպված էին իրենց տնտեսությունը թողնել Դիցմայրիում և հապճեպ՝ իրենց մեքենայով, ինչ հնարավոր է՝ այդ պահին վերցնել և տեղափոխվել Կապան:

Նշեցին նաև, որ երկու խումբ վարկային

պարտավորություններ ունեն: Առաջին խումբը «Կամուրջ» ունիվերսալ վարկային կազմակերպությանն է առնչվում, և այդ պահին դատական պրոցես է ընթանում, որն արդեն վճռահատության փուլում էր: Այս առումով Գարիկ Մուսաեյանին փոխանցեցի, որ հատուցումների գործընթացում ճիշտ կլինի՝ որպես երրորդ կողմ ներգրավվի Չայաստանի Յանդապետությունը: Այս համատեքստում Գարիկ Մուսաեյանը տեղեկացրեց, որ ինքը դիմել է Սյունիքի մարզպետարան, և մարզպետի ու տեղակալների մակարդակով իրեն խոստացել են, որ կմիջամտեն, որ գործում է միջգերատեսչական հանձնաժողով, որը հատուցումների հարցով է զբաղվում, Արցախից և ազատագրված տարածքներից բռնի տեղահանված անձանց իրավունքներով, նրանց կորցրած ունեցվածքի հատուցման խնդիրներով: Եվ հայտնեց, որ այդ փուլում, որպես իրավաբան, իրեն օգնելու կարիք չի տեսնում, քանի որ կարծում է, թե տարածքային իշխանությունն ամենը կանի իր լիազորությունների շրջանակում:

Բնականաբար, «Կամուրջ» ունիվերսալ վարկային կազմակերպության պահանջները դատարանի կողմից բավարարվեցին, որովհետև Գարիկ Մուսաեյանն ակտիվ գործողություններ չկատարեց դրա դեմն առնելու համար, և, հավատարմով պետական իշխանություն ներկայացնող տարածքային կառույցի ներկայացուցիչներին՝ վստահ էր, որ անգամ դատարանի վճիռ լինելու դեպքում այդ խնդիրը կլուծվի, և երաշխավորներն իրենց ինչևն ու ունեցվածքը վտանգի տակ չեն դնի:

Բայց եղավ այն, ինչ եղավ, և «Կամուրջ» ունիվերսալ վարկային կազմակերպությունը կատարողական թերթ ուղարկեց հարկադիր կատարման ծառայություն, այսինքն՝ բռնազանձման պրոցես սկսեց:

– Իսկ այդ ընթացքում իրեն ինչպես դրսևորեց մյուս կազմակերպությունը՝ «Ակբա» բանկը, որից Մուսաեյանը ևս վարկեր էր վերցրել:

– «Կամուրջ»-ին զուգահեռ՝ «Ակբա» բանկը դիմեց դատարան, և էլի մի քանի գործով ցանկանում էր ստանալ այն գումարները, որոնք ժամանակին հատկացրել էր Գարիկ Մուսաեյանին ու մորը՝ Արեգնազան Բարսեղյանին: Երբ «Ակբա» բանկը դիմեց դատարան, ես արդեն Գարիկ Մուսաեյանին հուշեցի, որ ճիշտ կլինի ինձ վստահի և թույլ չտա, որ գործն ընթանա այնպես, ինչպես «Կամուրջ» ունիվերսալ վարկային կազմակերպության դեպքում: Համաձայնեց, և սկսեցինք այդ գործերով առաջ շարժվել:

Դատական գործերով Գարիկ Մուսաեյանի և Արեգնազան Բարսեղյանի անունից առարկություններ եմ ձևակերպել և ներկայացրել դատարան, որոնցում հիմնական շեշտադրումն արվել է, ավելի ստույգ՝ երկու ասպեկտով ենք մեր առարկությունները ձևակերպել: Առաջին տեսանկյունն այն էր, որ Գարիկ Մուսաեյանին և Արեգնազան Բարսեղյանին ժամանակի ընթացքում վարկերը տրամադրելիս, վարկային գործակալները գնացել և տեղում Դիցմայրի-2 գյուղում, ուսումնասիրել են Գարիկ Մուսաեյանի տնտեսությունը՝

Շարունակությունը՝ էջ 6

Գարիկ Մուսաեյանի ողիսականը. և քանի-քանի մարդիկ են նման իրավիճակում հայտնվել Արցախի բռնազավթումից հետո

Սկզբը՝ էջ 5

սուբյեկտի զարգացման ներուժը, համոզվել, որ նրան հատկացված վարկերով ոչ թե ավտոմեքենա է գնվել, այլ ՊԿՄԿ-ի 2-րդ օրում ջերմոցային տնտեսություն է հիմնվել, ենթակառուցվածքներ ստեղծվել, ոռոգման համակարգ տեղադրվել: Այսինքն՝ այդ վարկերի կիրառությունը եղել է «ՊԿՄԿ-ի 2-րդ»-ում տնտեսությունը զարգացնելը:

Չաշվի առնելով այն, որ Կենտրոնական բանկը վերահսկում է բանկերի գործունեությունը, բնականաբար, Գարիկ Մուսաեյանը վստահ էր, որ ՊԿՄԿ-ի 2-րդ օրում, որ գտնվում է ազատագրված տարածքներում, հայկական հող է, և եթե նա նախապես իմանար, որ այդ տարածքները կարող են ինչ-որ մի օր աղորեջանական վերահսկողության տակ անցնել, բնականաբար, ինքն այդտեղ ներդրումներ չէր կատարի: Բացի այդ՝ եթե Գարիկ Մուսաեյանն այդքան իրավապահության չէ և չէր կարող հեռահար պլաններ մշակել կամ կանխատեսել, ապա «Ակբա» բանկը և Կենտրոնական բանկը, որ վերահսկում են վարկերի տրամադրման գործընթացը, կարող էին ուղղակի քաղաքացուն հուշել՝ այդտեղ ներդրումներ չկատարել, բանկի դա հետագայում կարող է անցնել Ադրբեջանին:

– Արդ, իսկ ո՞րն է երկրորդ ասպեկտը:

– Երկրորդ ասպեկտը վերաբերում է նրան, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է տվյալ դատական գործերով, ի դեմս իր իշխանական մարմինների, ներգրավվի որպես պատասխանող կողմ, որպես պատասխանող կողմի ինքնուրույն պահանջ չունեցող երրորդ անձ: Քանզի Հայաստանի Հանրապետության իշխանության կողմից պետք է ապահովվի հայրենիքի ու իր քաղաքացիների պաշտպանությունը՝ թե իր անվտանգության ուժերի, թե բանակի և այլնի միջոցով: Մի խոսքով՝ այս ամենը պիտի կազմակերպվեր Հայաստանի Հանրապետության կողմից: Մինևայնուհետև Կենտրոնական բանկը և մենթ ունենալիք այնպիսի կառույցներ, որ նախապես իրազեկվեն բնակչությանը հնարավոր զարգացումների մասին և հնարավորություն ընձեռելին՝ այդ տարածքներից դուրս գալ ու իրենց հետ տեղափոխել գոնե այն, ինչը հնարավոր էր:

– Կարելի՞ է ասել, որ պաշտպանական կառույցների թերություններ կային՝ մասնավորապես մարդկանց եվակուացնելու առումով:

– Ես զինուժի մասնագետ չեմ, բայց, որպես փաստաբան, կարծում եմ՝ պետությունը քանի որ իր քաղաքացիների անվտանգության երաշխավորն է (բանի որ այժմ Գարիկ Մուսաեյանի որդուն գորակոչել է բանակ, և ասում է՝ դո՛ւ որպես ՀՀ քաղաքացի, թո սահմանադրական պարտքը պիտի կատարես հայրենիքի հանդեպ) պետք է քայլեր ձեռնարկել: Մյուս տեսակետից, որպես հարկատու, մարդիկ ակնկալում են, որ այդ հարկերից գոյացած միջոցները կնպաստակառուցվեն պետության անվտանգային ընդհանուր կառուցակարգը, ինչպես և մարդկանց իրավունքները պահպանելուն և պաշտպանելուն:

– Արդեն ասվածից պարզ դարձավ, որ դատական գործընթացներ են եղել, հակիրճ ներկայացրե՞ք այդ ամենը:

– Մեր բոլոր առարկությունները, միջնորդությունները միտված էին այն բանին, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է քննվող գործերով ներգրավվի: Այս մարտավարությունը փաստաբանական, կամ որ մինևայնուհետև՝ իրավական առումով ողջամիտ է, ուստի և այդ քայլին դիմեցինք: Դրան զուգահեռ, Գարիկ Մուսաեյանն ինչպես անձամբ, այնպես էլ իմ միջոցով դիմեց պետական մարմիններին, այսինքն՝ սրան զուգահեռ ինքն անընդհատ գնում-գալիս էր մարզպետարան՝ հաշվի առնելով վերջինիս՝ կառավարության տարածքային մարմին լինելը:

Եվ ինչպես «Կամուրջ» վարկային ունիվերսալ կազմակերպության դեպքում էր, այս փուլում ևս Գարիկ Մուսաեյանին վստահեցրին, հավատացրին, խոստացան, թե ինքը կարող է հաշտության համաձայնագիր կնքել «Ակբա» բանկի հետ և (այն հաշտության հա-

մաձայնության շրջանակում վստահ կարող է լինել, որ առնվազն 2023 թ. հոկտեմբերի դրությամբ ամբողջությամբ իրեն հատուցած կլինեն այն ամենը, ինչ կորցրել է ՊԿՄԿ-ի 2-րդ օրում: Եվ ինքը կկարողանա կատարել իր վարկային պարտավորությունները, ու անհրաժեշտություն չի առաջանա երաշխավորների ունեցվածքը վտանգի տակ դնել, նրանց հաշվին բռնազանձումներ կատարել: Եվ հաշվի առնելով, որ Գարիկ Մուսաեյանը հավատով էր լցված իր պետության ու տարածքային կառույցի ներկայացուցիչների նկատմամբ, ինձ փոխանցեց, որ այս մի դեպքում մենք նույն ուղղությամբ չգնանք, և ինքը հաշտության համաձայնություն կկնքի «Ակբա» բանկի հետ, առանց պետության ներգրավվածության՝ հավատարմի, որ պետության տարածքային կառույցի պատասխանատու անձինք իր կողքին են:

Կնքվեց երկկողմ հաշտության համաձայնագիր, կազմվեց ժամանակացույց, բանկը փորձեց իր մարդկային վերաբերմունքը և հասցեագրեցինք ՀՀ Ազգային ժողովի նախագահին, Մյուսինքից ընտրված պատգամավորներին, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին, ՀՀ գլխավոր դատախազ Աննա Կարդապետյանին, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանին, ՀՀ Մյուսինքի մարզպետ և ՀՀ Մյուսինքի մարզի գյուղացիներ ու ներդրման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Ռոբերտ Դուրյանյանին, նույն հիմնադրամի գործադիր տնօրեն Կարեն Թադևոսյանին, Արցախի Հանրապետության գլխավոր դատախազ Կարեն Գաբրիելյանին, ԱՀ պետական նախարար Սամվել Ծախրամյանին, Արցախի Հանրապետության պաշտոնատար այլ անձանց, Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանին:

Այդ գրությունն էլեկտրոնային փոստով ուղարկվել է հասցեատերերին: Գրությանը կից շարադրվել են այն բոլոր իրողությունները, որոնց միջով անցել է Գարիկ Մուսաեյանի և Արեգանյան Բարսեղյանի ընտանիքը՝ 2020 թ. սեպտեմբերի 27-ից սկսված պատերազմական գործողություններից, դրանից հետո տարբեր պետական կառույցներ դիմելու գործընթացներից, նշվել է որտեղ է դիմվել, ինչ նպատակով, ինչպիսի դատական գործեր են եղել, ովքեր են երաշխավորները, ովքեր են ներգրավված եղել դատական պրոցեսներում, ինչ արդյունքների ենք հասել, ինչու ենք հավատացել և «Ակբա» բանկի հետ հաշտության համաձայնագիր կնքել. այս ամենը նկարագրվել է և ըստ էության՝ նաև շարադրվել են այն դիմումների ու դրանց պատասխանների մասին, որոնք հասցեագրվել են այս գրությունից առաջ Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանին: Եվ արդյունքում ստացված 12.12.2023 թ. գրությունը, որով նշվել է, թե Արցախի կառավարության 2021 թ. մարտի 17-ի թիվ 222-Ն որոշմամբ հաստատված 2020 թ. սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձագերծված պատերազմական գործողությունների հետևանքով դժվարին կացության մեջ հայտնված ՀՀ իրավապահ և իրավաբանական անձանց վարկային պարտավորությունների կատարման ուղղված պետական ֆինանսական աջակցության ծրագրի շրջանակում Արցախի ներդրումային հիմնադրամի կողմից իրականացվում է երկու տեսակ աջակցություն: Ըստ էության Գարիկ Մուսաեյանի ընտանիքն ընդգրկված է այդ երկու



Չրայր Խաչատրյան, Գարիկ Մուսաեյանի փաստաբանը

ծրագրից մեկում: Արցախյան ներդրումային հիմնադրամին հասցեագրված գրությանն ի պատասխան՝ 19.06.2023 թ. ստացվել է Մարդու իրավունքի պաշտպանի պատասխանից տարբերվող պատասխան՝ հասցեագրված Արեգանյան Բարսեղյանին, որում նշված էր. «Ի պատասխան Ձեր կողմից 19.06.2023 թ. Արցախի ներդրումային հիմնադրամին ներկայացված դիմումի՝ տեղեկացում ենք, որ շահառու ճանաչվելու համար Ձեր կողմից լրացված 41 հազար 120-րդ առցայն դիմումը գտնվում է մշակման փուլում»: Նաև պատասխանը տրվել է, որ այդ գործընթացի արդյունքում իրենք կիրառվեն, թե ինչպես կարող են այդ հատուցումը ստանալ:

– Ինչքան է կազմում մայր գումարը:

– Մոտավորապես ինը միլիոն դրամի չափով են վարկային պարտավորությունները:

– Կոպիտ ասած՝ Մուսաեյանը որքան է պարտք բանկերին:

– Ութ միլիոն 300 հազար դրամ, բայց քանի որ վարկային պարտավորությունների ժամանակացույցից շեղվել է, այդտեղ տույժ, տուգանք, տոկոս հավաքություններ են գործում:

Չարցն այն է, որ 2023 թ. սեպտեմբերի 19-ի իրադարձություններից հետո Արցախի Հանրապետությունը կազմալուծվեց, և մարդիկ կորցրեցին տարիների չարաբանքով ստեղծված ինչքն ու ունեցվածքը: Համենայն դեպս՝ գիտակցելով, որ բանկային պարտավորությունները հնարավոր չէ կատարել՝ Գարիկ Մուսաեյանն ու են «Ակբա» բանկի Կապանի մասնաճյուղի կառավարչին հանդիպեցին, ով մեզ խորհուրդ տվեց էլի խնդրանքով դիմել «Ակբա» բանկի գլխավոր գործադիր տնօրենին Հակոբ Անդրեասյանին և տեղեկացնել, որ անհասկանալի գործընթացների արդյունքում նոր հաստատված հաշտության համաձայնությամբ և տրված ժամանակացույցով Մուսաեյանի ընտանիքը չի կարող կատարել իր վարկային պարտավորությունները: Նաև նշվել է, որ իրենք ամբողջ ընտանիքով պատրաստ են կատարել ամսական 50-60 հազար դրամ վարկային պարտավորություն և ի գործու չեն կատարելու այն վարկային պարտավորությունը, որը նախատեսված է 2023 թ. հոկտեմբերից սկսած՝ 600 հազար դրամի չափով: Բանկի գլխավոր գործադիր տնօրենի կողմից ստացվել է պատասխան, որ բանկն այլևս չի կարող ընդառաջել, ու խնդրել են՝ վարկային պարտավորությունները պատշաճ կատարել: Այս գրությունը մենք ստացել ենք 2024 թվականի հունվարի 29-ին: «Ակբա» բանկն արդեն դիմել է դատարան և պահանջում է կատարողական թերթ ուղարկել հարկադիր կատարման ծառայություն:

Դրանից հետո, բնականաբար, Գարիկ Մուսաեյանի ընտանիքին այլ բան չէր մնում անելու, բան մտածել ուղեբեռը հավաքել, եթե ուղեբեռ կարելի է անվանել այն փոքր ունեցվածքը, որը հնարավոր է տեղափոխել, և մտածել՝ արդո՞ւք ճիշտ է, որ իրենք ստանալ են

որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի: Որովհետև քաղաքացիությունը, որքան էլ նշանակում է երկրի հանդեպ ունեցած պարտականությունների բարեխիղճ ու ճշտորեն կատարում, ելքադրում է նաև պետության կողմից մարդու իրավունքների պաշտպանություն: Ի դեպ Գարիկ Մուսաեյանը ներգրավված է հայրենիքի պաշտպանության գործընթացում, ինքը պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն կրող անձ է ներկայումս, որի մասին նշվել էր 2023 թ. սեպտեմբերի 2-ի գրության մեջ: Բացի այդ, նրա որդին այժմ գտնվում է պարտադիր զինծառայության մեջ, որի մասին նույնպես նշվել էր 2023 թ. գրությամբ:

– Այնուամենայնիվ, ո՞րն է խնդրի լուծումը, ի՞նչ եք կա՞ դուրս գալու ստեղծված իրավիճակից:

– Խնդրի լուծումն ունի մեկ ուղի՝ պայմանավորված պետական մակարդակով կամք դրսևորելու մեջ: Եթե կա ցանկություն և աջակցություն: Եթե չկա աջակցություն, նշանակում է մենք չունենք այն պետական կամքը, որ պիտի լիներ քաղաքացուն աջակցելու հարցում: Մինևայնուհետև ուզում եմ շեշտել՝ անուններ չտալով՝ ուղղակի կան տեղեկություններ, որ անգամ մարզային մակարդակով շատ ընտանիքներ աջակցություն են ստացել: Կարծում եմ՝ Գարիկ Մուսաեյանի և Արեգանյան Բարսեղյանի ընտանիքը նույնպես արժանի է պետական մակարդակով աջակցության:

– Իսկ Գարիկ Մուսաեյանն ինչ-որ բան ունի՞ վաճառելու, թե ամեն ինչ մնացել է Ադրբեջանի զինուժի վերահսկողության ներքո:

– Այնտեղից՝ ՊԿՄԿ-ի 2-ից հնարավոր չի եղել տնտեսությունը տեղափոխել: Մնացել են այնտեղ՝ շենք-շինություններ՝ բնակելի տներ՝ առնվազն չորս հատ, մեկը, որքան հիշում եմ՝ անավարտ, ջերմոցային տնտեսություն, կառուցվում էր երկրորդ ջերմոցը, կար ենթակայան, ոռոգման համակարգ, մի խոսքով՝ կային բոլոր ենթակառուցվածքները, որոնք անհրաժեշտ են գյուղացիական տնտեսություն վարելու համար: Գարիկ Մուսաեյանը սկզբից իր ընտանիքով էր տեղափոխվել, իրենց տնտեսությունն ընդլայնելու զուգահեռ, այլ ընտանիքներ էին տեղափոխվել ՊԿՄԿ-ի 2-ի, հույս կար, որ լուրջ բնակավայրի կվերածվեր «ՊԿՄԿ-ի 2»-ը:

– Հիմա ի՞նչ իրավիճակում է Գարիկ Մուսաեյանի ընտանիքը:

– Գարիկ Մուսաեյանը, հուսալով, որ պետական աջակցություն կլինի, սահմանափակ Մյուսինք բնակավայրում փորձում է ստեղծել իր տնտեսությունը, ընդամենն ուզում է, որ որևէ աջակցության ծրագրով մարմին իր վարկային պարտավորությունները, որ իր երաշխավորները, մեղմ ասած, իր հոգուն ծանրացած չլինեն, և որոշակի աջակցություն տրվի իրեն՝ սահմանափակ Մյուսինք բնակավայրում տնտեսություն հիմնելու համար: Փաստ է, որ Գարիկ Մուսաեյանը ներկայումս աղաղակում է, թե իրեն չեն աջակցում, իր վարկային պարտավորություններն ու երաշխավորները ծանրացած են իր ընտանիքի վրա: Հետևաբար՝ երբ ասում եմ՝ չկա պետական աջակցություն, սա նկատի ունեմ: Փաստորեն, պետությունը տեղ չկանգնեց իր մի մասնիկը հանդիսացող ընտանիքին:

Մի մտահոգություն ևս. կարծում եմ՝ իշխանության տարածքային կառույցը քաղաքացուն հուզող խնդիրները ճիշտ չի ներկայացնում հանրապետական մակարդակի իշխանություններին, ըստ իս՝ այս պարագայում ևս զեկվուցումը խնդիր ունենք: Ես չգիտեմ, թե Գարիկ Մուսաեյանի խնդիրն ինչպես է ներկայացվում, օրինակ, հանրապետության վարչապետին, համապատասխան նախարարություններին, աջակցող հիմնադրամներին: Բայց բոլոր գրությունները, որոնք ուղարկվում են հանրապետական մակարդակով վարչապետին, ԱՀ պատասխանավորներին... Տրամաբանությունը հուշում է, որ այդտեղից հանձնարարական պիտի իջեցվի, և մարզպետարանում պատասխանատու անձինք պետք է այդ դիմումներով սկսեն զբաղվել: Ինձ համար, օրինակ, այս պահին անհասկանալի է, այդ մարդիկ զբաղվո՞ւմ են մեր գործով, թե՞ ոչ: Եթե զբաղվել են՝ ի՞նչ ընթացքի մեջ է և ո՞ր փուլում, ինչո՞ւ է ձգձգվում այդ գործընթացը, եթե այս պրոցեսը ձգձգվում է, ապա մի այլ պարագայում ինչպե՞ս են կարողացել ուրիշներն արդեն հատուցում ստանալ:

ՀՐՈՒՅՑԸ՝ ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵՆՅԱՆԻ



Դավիթբեկ գյուղի տարեգիրը

Գավրուշա Ռուբենի Զարուկյան - «Մնվել է 1932 թվականին Դավիթբեկ գյուղում: Սովորել և ավարտել է գյուղի յոթնամյա դպրոցը, աշխատել կուլտուրականում: 1952 թվականին գորակոչվել է խորհրդային բանակ, ծառայել 3,5 տարի: Չորացրվելուց հետո վերադարձել է հարազատ գյուղ, զբաղվել տարբեր արհեստներով և միաժամանակ սովորել գյուղի երեկոյան դպրոցում ու ստացել միջնակարգ կրթություն: Գավրուշա Զարուկյանը մասնակցել է կուլտուրականությանը կատարվող բոլոր շինարարական աշխատանքներին, մարդկանց համար կառուցել բնակելի տներ: Երիտասարդ տարիքից շատ էր հետաքրքրվում գյուղի պատմությամբ: Նա զբաղվում էր ինքնակրթությամբ, կարդում հայ ժողովրդի պատմության վերաբերյալ գրքեր: Չրուցում էր տարեց մարդկանց հետ և գրի առնում նրանց հիշողությունները: 75 տարեկանում նա սկսեց գրել գյուղի պատմությունը: 2015թ. հրատարակվեց Գավրուշա Զարուկյանի «Չեյվայից՝ Դավիթբեկ» գիրքը: Այն գյուղի պատմությանը նվիրված առաջին փորձն է: Զեղինակը ցույց է տվել, թե ով-


բեր են դավիթբեկցիները, որտեղից են սերում նրանց արմատներն ու ինչ ճանապարհ են անցել: Կարելի է ասել գիրքը դավիթբեկցիների ծննդյան վկայականն է»: /Չատված Գավրուշա Զարուկյանի «Չեյվայից՝ Դավիթբեկ» գրքից/

Երբ ճանապարհ եմ գնում, հավատում եմ, որ օրն ինձ հաստատ իմաստալից պահ է նվիրելու, ուրիշ բան էլ որ չկատարվի՝ գոհացուցիչ կլինեն նաև ճանապարհներիս հանդիպող բնության զարմանահրաշ, սիրո ու աչք շոյող տեսարանները, գեղանախշ գույները, կարոտ և սեր հուշող բնության շուրջները զգալն ու վայելելը: Գավրուշա Զարուկյանը մարդկանց հետ է ծանոթացնում ու մտերմացնում, և հետո էլ տարվա ամփոփման պահերին շնորհակալ եմ լինում ճանապարհից, որ հանդիպեցի այդ սրտից փուշ հանող մարդկանց, որոնց հետ հաղորդակցվելուց ներսիս նեղվածությունն է կարգավորվում, ուժեղանում եմ, ու ինձ մշտապես ուղեկցող լավատեսությունն է վերականգնվում: Եվ ես հիշում եմ նրանց ու մտքում կամ բարձրաձայն ասում՝ ինչ լավ է՝ հանդիպեցի... Մարզի համայնքներում բնակվող ստեղծագործողների վերաբերյալ տեղեկատվա-

կան շտեմարանը համալրելու և թարմացնելու նպատակով երբեմն ճանապարհիս տանում է այն մարդկանց մոտ, ովքեր գրականության, արհեստի ու արվեստի բնագավառներում իրենց ձեռագիրն ու ասելիքն ունեն: Նրանք ինքնուսուցիչ և բնությունից օժտված շնորհալիներ են, ովքեր ապրում են մեր կողքին, մեր այս չքանալի բնօրրանում: Նրանք՝ իրենց առօրյա հոգսերից ու անելիքներից չզոգոհողներ ու չնեղսրտվողներ են, կյանքի մատուցած բոլոր փորձություններին անտրտուն և հաղթողի տրամաբանությամբ տեր կանգնողներ, իրենց հող ու ջրին հավատարմորեն նվիրվածներ: Նրանք վերահաստատում են, որ մարդուն ի վերուստ տրված կյանքն իսկապես գաղտնիք է ու հրաշք, և այն չափվում է ոչ միայն ապրած տարիներով, այլև գործերով: Ամեն անգամ այդպիսի մարդկանց հանդիպելուց և նրանց հետ զրույցի բռնվելուց հետո հավատալի մարդու արարչագործ եության հանդեպ ավելի է մեծանում, համոզվում եմ, որ աշխատելու, ստեղծագործելու ընթացքում միշտ էլ ինչ-որ բան աղավաղվում է, երբ սեր չի լինում ու սիրով չի արվում: Այսպիսի մտքերով էի, երբ հանդիպեցի Դավիթբեկ գյուղում բնակվող Գավրուշա Զարուկյանին: Զանդիպման առաջին իսկ պահերից էլ՝ ձեռքստեղծում ու ժպիտ, արտաքին պարզության տակ թաքնված խորը, զննող հայացք, և ես արդեն չէի կասկածում՝ առաջին իսկ խոսքերից էլ հասկացա, որ իմ առջև 91-ամյա տարիքը խելամոռոեն ապրած ու եղածից գոհացող հայ մարդու կերպար է, ով ամուր թելերով ու նվիրումով է կապված իր հող ու ջրին, և կյանքի ամեն մի օրն էլ ապրում է հավատա-

լու հույսը դաշինք դարձրած: Սեղանին տեսներ էին, որտեղ Գավրուշա Զարուկյանը խնամքով, կանոնավոր ու պարզ ձեռագրով հուշեր ու պատմություններ է գրում, նշանավոր մարդկանց գործունեության մասին վերլուծություններ, ապրածի ու տեսածի անդրադարձ և մեկնաբանություններ: Նայում եմ տարբեր պատմություններով լցված այդ տետրերին ու հիանում տարեց մարդու հիշողությամբ, տարրուրանակ սրտում ամբարվածը, տեսածն ու լսածն անկեղծորեն ու առանց ավելորդությունների շարադրելու կարողությամբ: Ասում են՝ հիշել կարողանում է նա, ով կարողանում է ուշադիր լինել: Գավրուշա Զարուկյանը, հայրենի բնաշխարհի ու մարդկանց հանդեպ ուշադրությունն ու սերն ամբողջ կյանքում շարունակում են ուղեկցել և օգնել Գավրուշա Զարուկյանին, որ ծերությունն անտրտուն անցկացնի, ապրի լուսաբացներն օրհնությամբ ու վաստակածի խաղաղությամբ: Զանդիպման ընթացքում մեր զրույցի թեման ծննդավայրի բաղադրության ու անկրկնելիության, գյուղն ու տունը շենացնող մարդու, պապերից մեզ փոխանցված արժեքավոր ավանդույթների ու սովորույթների մասին էր: Պատմում է հանդարտ ու հանգամանակալից, ինքնավերջ թերթում տեսրերն ու կարդում գրառումները, հիշողության շարադրանքի մեջ էլ մեղեդային հնայք կա, որից հանդիպումն ավելի հետաքրքիր է դառնում:

Գավրուշա Զարուկյանը բնածին ստեղծագործողի սիրտ ու հոգի ունի, որն էլ միշտ օգնել է, որ գյուղի չվերջացող աշխատանքները /տունն ու այգի, հողամաս ու հանդ, արտ, անտառ ու սար/, սիրով արվեն, օրհնված բերք ու բարիք արարվի: Ստեղծագործող մարդու մոտեցմամբ էլ ապրում է ու առանց աշխատելու էլ չի պատկերացնում օրը: Եվ իր կարծիքով էլ դավաճան կարելի է համարել գյուղում ապրող այն մարդուն, ով չի աշխատում: Զորը կնեղանա, երես կթեքի, սերմը ցանելու համար է, այգին ու բանջարանոցն էլ միշտ պետք է խնամված ու բերքառատ լինեն, սեղանին էլ տարվա տված անարատ բերք ու մթերքը լինեն: Նույնիսկ տարիքի հետ ի հայտ եկած առողջական խնդիրներն էլ չեն խանգարում Գավրուշա Զարուկյանին, որ իր առօրյա աշխատանքները ծիսական արարողության վերածի, իսկ օրվա մայրամուտին էլ ձեռքն առնի գրիչն ու մատենագրի վարպետությամբ իր հիշատակարանը գրի: Խոսքի մեջ ասումնք կա, մեծերից լսած մեջբերումներ: Նրա հետ անցկացրած պահերը երանելի են դառնում, հայ մարդու բարեպաշտ պահվածքից հեռավոր մանկության ու անխռով երջանկության կարոտով է լցվում հոգիդ: Երանելի պահ է. գյուղական միջավայրերին բնորոշ ներդաշնակություն՝ գյուղում ապրած անկրկնելի մանկության համուժնոտով պարուրված: Զրույցի ընթացքում թերթում եմ Գավրուշա Զարուկյանի տետրերը, և կարդացածս տողերն ու մտքերը հեռու են վանում երբեմնի մտավախությունս, երբ ասում եմ, թե ամբողջ աշխարհում խնդիր կա, որ գրքերը չեն ընթերցվում, համակարգիչները հետ են մղում ընթերցանությունը: Գավրուշա Զարուկյանի կերպարն ուրիշ բան է հուշում, որ շնորհալի մարդը պարզապես պետք է աշխատի, ստեղծագործի ու հրատարակի իր գործերը, մնայունը՝ կմնա: Նա այդպես էլ ապրում է՝ իր հոգու հուշածը, սրտի ուզածն ու իրեն հուզածը թողնելով հանձնելով: 2015 թ. տպագրվեց իր առաջին գիրքը՝ «Չեյվայից՝ Դավիթբեկ», աշխատել էր երկար տարիներ՝ հավաքելով գյուղի վերաբերյալ տեղեկություններն ու փաստերը, գրի առնելով նշանավոր դավիթբեկցիների մասին պատմող պատմություններն ու հուշերը: Գավրուշա Զարուկյանը դեռ երազանքներ, ասելիք ու պատմելիք շատ ունի: Ավարտին է հասցրել ու հրատարակման է պատրաստ իր երկրորդ գիրքը: Գավրուշա Զարուկյանը կպատմի անցյալ դարի նիստուկացի, ընտանեկան միջավայրի ու սովորույթների մասին, երբեմն կարոտով և ափսոսանքով կնկարագրի իր ապրածն ու տեսածը, Չեյվայից՝ Դավիթբեկ ճանապարհին էլ գուզահեռներ կտանի անցյալի ու ներկայի միջև, ծանրութեթև կանխի հիմն ու նորը, լավատեսի մեկնաբանությամբ էլ կամփոփի ասելիքը՝ «Չէ, ամեն ինչ լավ է լինելու, Աստված անարդար բան չի սիրում, ես պետք չի մնա...»:



Դավիթբեկ գյուղի Սուրբ Գայանե եկեղեցի

**ԹԱՄԱՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀՀ ՍՅՈՒՆԻԵԻ ՄԱՐԶԻ ԵՏԻ
ԱՇԽԱՏԱԿԱԾՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ և ՄՊՈՐՏԻ ԿԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ**

Դիմորդների 18,3 տոկոսը «Հայոց լեզու և հայ գրականություն», 24,8-ը՝ «Հայոց պատմություն» առարկաներից դրական միավորի շեմը չի հաղթահարել

Ամփոփվել են 2024-2025 ուսումնական տարվա բուհերի ընդունելության միասնական քննությունների առաջին փուլի արդյունքները:

ԿԳՄՍ Նախարարության հաղորդմամբ, միասնական քննությունների 1-ին՝ ձմեռային փուլին, ի սկզբանե հայտարարվել է 9672 դիմորդ (դիմորդների մի մասը հայտարարվել էր 1, մի մասը՝ 2 քննություն հանձնելու համար): Հունվարի 20-ից մինչև փետրվարի 4-ը՝ 6 քննական օրերի ընթացքում, դիմորդները քննություն են հանձնել 12 առարկայից: Քննություն հանձնած դիմորդների թիվը 9604 է:

ՀՀ ամբողջ տարածքում քննական գործընթացը կազմակերպվել է 43 քննական կենտրոնում, 14-ը՝ Երևանում, 29-ը՝ մարզերում:

Դիմորդները միասնական քննություններ են հանձնել «Հայոց լեզու և հայ գրականություն», «Քիմիա», «Աշխարհագրություն», «Օտար լեզուներ», «Ֆիզիկա», «Հայոց պատմություն», «Մաթեմատիկա», «Կենսաբանություն», «Ռուսաց լեզու» առարկաներից:

Միասնական քննության առաջին փուլի արդյունքներով «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի քննությանը հայտագրվել է 3240 դիմորդ, քննությանը մասնակցել է 3211-ը: Միջին միավորը եղել է 11.09: Դրական միավորի շեմը չի հաղթահարել 589 դիմորդ (մասնակիցների 18,3%-ը), 18-20 միավոր է

հավաքել 183-ը (5,7%):


«Քիմիա» առարկայի քննությանը հայտագրվել է 1045 դիմորդ, քննությանը մասնակցել է 1034-ը: Միջին միավորը եղել է 10.46: Դրական միավորի շեմը չի հաղթահարել 345 դիմորդ (մասնակիցների 33,4%-ը), 18-20 միավոր է հավաքել 121-ը (11,7%):

«Աշխարհագրություն» առարկայի քննությանը հայտագրվել է 56 դիմորդ, քննությանը մասնակցել է 56-ը: Միջին միավորը եղել է 11.00: Դրական միավորի շեմը չի հաղթահարել 10 դիմորդ (մասնակիցների 17,9%-ը), 18-20 միավոր է հավաքել 1-ը (1,8%):

«Անգլերեն» առարկայի քննությանը հայտագրվել է 5045 դիմորդ, որից քննությանը մասնակցել է 4983-ը: Միջին միավորը եղել է 12.85: Դրական միավորի շեմը չի հաղթահարել 842 դիմորդ (մասնակիցների 16,9%-ը), 18-20 միավոր է հավաքել 872-ը (17,5%):

«Գերմաներեն» առարկայի քննությանը հայտագրվել է 30 դիմորդ, որից քննությանը մասնակցել է 30-ը: Միջին միավորը եղել է 13.84: Դրական միավորի շեմը չի հաղթահարել 4 դիմորդ (մասնակիցների 13,3%-ը), 18-20 միավոր է հավաքել 2-ը (6,7%):

«Ֆրանսերեն» առարկայի քննությանը հայտագրվել է 32 դիմորդ, որից քննությանը մասնակցել է 31-ը: Միջին միավորը եղել է 12.19: Դրական միավորի շեմը չի հաղթահարել 5 դիմորդ (մասնակիցների 16,1%-ը), 18-20 միավոր է հավաքել 4-ը (12,9%):



«Իսպաներեն» առարկայի քննությանը հայտագրվել է 1 դիմորդ, քննությանը մասնակցել է 1-ը: Միավորը եղել է 16.75:

«Ֆիզիկա» առարկայի քննությանը հայտագրվել է 827 դիմորդ, որից քննությանը մասնակցել է 818-ը: Միջին միավորը եղել է 10.64: Դրական միավորի շեմը չի հաղթահարել 245 դիմորդ (մասնակիցների 30%-ը), 18-20 միավոր է հավաքել 79-ը (9,7%):

«Հայոց պատմություն» առարկայի քննությանը հայտագրվել է 1086 դիմորդ, որից քննությանը մասնակցել է 1059-ը: Միջին միավորը եղել է 11.51: Դրական միավորի շեմը չի հաղթահարել 263 դիմորդ (մասնակիցների 24,8%-ը), 18-20 միավոր է հավաքել 147-ը (13,9%):

«Մաթեմատիկա» առարկայի քննությանը հայտագրվել է 4198 դիմորդ, որից քննությանը

մասնակցել է 4100-ը: Միջին միավորը եղել է 10.51: Դրական միավորի շեմը չի հաղթահարել 1023 դիմորդ (մասնակիցների 24,95%-ը), 18-20 միավոր է հավաքել 269-ը (6,6%):

«Կենսաբանություն» առարկայի քննությանը հայտագրվել է 1222 դիմորդ, որից քննությանը մասնակցել է 1191-ը: Միջին միավորը եղել է 12.09: Դրական միավորի շեմը չի հաղթահարել 283 դիմորդ (մասնակիցների 23,8%-ը), 18-20 միավոր է հավաքել 217-ը (18,2%):

«Ռուսաց լեզու» առարկայի քննությանը հայտագրվել է 141 դիմորդ, քննությանը մասնակցել է 141-ը: Միջին միավորը եղել է 10.29: Դրական միավորի շեմը չի հաղթահարել 38 դիմորդ (մասնակիցների 26,95%-ը), 18-20 միավոր է հավաքել 3-ը (2,1%):

20 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 Թ.

«Ամարյան» բարեգործական հիմնադրամը 18 միլիոն դրամ է նվիրաբերել «Վինետթ Գորիս» հիմնադրամի՝ Սյունիքում արցախցի տեղահանված տարեցների սոցիալական կացարանի ծրագրին

«Ամարյան» բարեգործական հիմնադրամը 18 միլիոն ՀՀ դրամ է նվիրաբերել Սյունիքի մարզի Գորիս համայնքում «Վինետթ Գորիս» զարգացման հիմնադրամի կողմից «301 Իմաստության երկիր» հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Տարեցների ցերեկային ժամանցի և խնամքի կենտրոնի» համար, որի առաջնությունը նպատակն է ապահովել Արցախից տեղահանված և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված տարեցների բարեկեցությունը: Գումարը կուղղվի տարեցների կենտրոնի շենքի գնմանը:

«Վինետթ Գորիս» զարգացման հիմնադրամի այս կենտրոնը կունենա 24 սենյակ, սոցիալական ճաշարան, ցերեկային կենտրոն՝ այս խոցելի խմբին ապահովելով արժանապատիվ կենցաղային պայմաններով և սոցիալական ծառայություններին հասանելիությամբ, ինչպես նաև ապահով միջավայր կստեղծի շփման և միայնության ու մեկուսացման զգացողության հաղթահարման համար:

«Այս նախաձեռնությունը համահունչ է մեր հիմնադրամի համոզմունքներին և արժեքներին», - ասել է «Ամարյան» բարեգործական հիմնադրամի համահիմնադիր Դավիթ Ամարյանը: «Արցախում տեղի ունեցածը լուրջ մարդասիրական մարտահրավեր է ստեղծել, և համագործակցելով «Վինետթ Գորիս» զարգացման հիմնադրամի նման կազմակերպությունների հետ, որը Սյունիքում ավելի քան 15 տարի զբաղվում է սոցիալական ծրագրերով, «Ամարյան» բարեգործական հիմնադրամը ցանկանում է շրջափելի դրական փոփոխություն ստեղծել այս ճգնաժամից տուժածների կյանքում»:

«Մեր արմատները Սյունիքից են և այս մարզն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում մեր սրտերում: Հիմք կարող մեր ներդրումը չունենալ Սյունիքի հրատապ կարիքներին ուղղված այս նախաձեռնության մեջ», - Լսել է «Ամարյան» բարեգործական հիմնադրամի համահիմնադիր Վարդան Ամարյանը՝ ընդգծելով աջակցության ջանքերի համակարգված լինելու կարևորությունը: «Այս կենտրոնը կտրամադրի անհրաժեշտ ապաստան և աջակցություն այն տարեցներին, ովքեր կորցրել են իրենց տունն ու հարազատներին»:



Դավիթ Ամարյան Վարդան Ամարյան

«Վինետթ Գորիս» զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Ռուզաննա Տոռոզյանն ասել է, որ 2020 թվականի պատերազմից հետո «Վինետթ Գորիս»-ը ընդլայնել է իր գործունեության շրջանակը՝ մարդասիրական աջակցություն ցուցաբերելով նաև Արցախից տեղահանված ընտանիքներին: «Այնպես էր, որ այս դժվարին իրավիճակում առավել խոցելի առանց խնամքի մնացած տարեցներն են, թոշակառուներ, ովքեր ամենաշատն են հոգատարության կարիք գզում: Կարևոր է ստեղծել պայմաններ, որպեսզի տարեցներին արժանապատիվ սոցիալական ծառայություններ մատուցվեն, նրանց զբաղվածության ու ժամանցի հարցը լուծվի: Գաղափարները շատ են, և դրանք իրականացնելու համար մեզ գործընկերներ են պետք: Առաջին արձագանքեց «Ամարյան» բարեգործական հիմնադրամը, ինչի համար շնորհակալ ենք: Մենք գնահատում ենք վստահությունը, տարեցների խնդիրները թեթևացնելու պատրաստակամությունը: Վստահ ենք, որ այս համագործակցությունը որակապես փոխելու է հարյուրավոր տարեցների կյանքը, իսկ նրանց ջերմացնող ժպիտները, հոգաշատ կյանքը մի փոքր ուրախ դարձնելը մեզ համար ամենակարևորն են: Այս մեծ գաղափարի կյանքի կոչման համար յուրաքանչյուրի ջանքերն ու ներդրումներն անկասկած ողջունելի են», - Լսել է Ռուզաննա Տոռոզյանը: 14 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 Թ.

ՀԱՄԱՁԱՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒԹՅՈՒՄ

Հրշակա միջավայրի Նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի և ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն և 03.08.2023թ. N1332-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է Արթուր Հակոբյանի՝ Սյունիքի մարզի Կապան համայնքի Սյունիք գյուղի վարչական տարածքում խմելու, կենցաղային և արդյունաբերական նպատակներով «Վամաքս» արջուրից 0,8 ր/լ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը: Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին և փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-ից - 18-ը դիմել ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմին (հասցեն՝ ք. Երևան, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ): Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2024 թվականի մարտի 4-ին, ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ: ՀՐՏԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մեղրի համայնքի հարգելի բնակիչներ
«Պրո Կոնստրուկտ» ՍՊԸ-ի (հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, Առինջ Բ թաղ. 1-ին փ. թիվ 2/1) կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տերտերասարի ռազմական հանքավայրի վերազնահատման նպատակով երկրաբանական ուսումնասիրության 2024-2026 թթ. աշխատանքների» ծրագրի իրականացման նպատակով նախատեսվող հանրային լսումը Վարդանիձոր բնակավայրում տեղի կունենա մարտի 28-ին՝ ժամը 17:00-ին, իսկ Լիճք բնակավայրում՝ մարտի 29-ին՝ ժամը 17:00-ին: Առաջարկությունների, դիտողությունների և կարծիքների համար կարող եք զանգահարել Մեղրի համայնքապետարան՝ +374 286 4-35-00 հեռախոսահամարին (աշխատանքային օրերին՝ ժամը 09:00-13:00 և 14:00-18:00-ն) կամ ներկայացնել բանավոր՝ հանրային լսման ընթացքում, ինչպես նաև կարող եք գրել hamaynq@meghri.am էլ. փոստի հասցեին՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում:
Մարիամ Հակոբյան
Համայնքի ղեկավարի կողմից հանրային լսման համար լիազորված անձ՝ Մեղրի համայնքապետարանի մամուլի բարտուղար

ԿՈՐԵԼ Է Արտուր Արարատի Բայասայանի պատկանող «US2-82» մակնիշի տրակտորի (տեխնիկական վկայագիրը՝ Բ-001499, թողարկման տարեթիվը՝ 1990) պետհամարանիշը՝ 37-33 SL: Համարել անվավեր:

Սյունյաց Երկիր
ԳԻՄՆԱԴՐԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇՄԱՐ»
ՍԱՅՄԱՆԱԾԱԿ ԴԱՏԱՍԽԱՆՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՈՒՄ Ե 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝ ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:
«ԳՈՒԱԶՂ» - ԾԱՆՈՒԹՅՈՒՄ բաժնում

տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը «Սյունյաց երկիր» պարտադիր է: Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բազումյան 1-րդ հիշարկ, 70ա շենք:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրմանը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 28.02.2024թ.: